Փաստ. անվանումը	Օտարերկրացիների փաստաթղթերի հավաքագրման և կացության քարտ ձեռք բերելու ընթացակարգ
Փաստ. N	ԵՄՀ/ԸԿ-ԿԳ-43-01
Հաստատման ամսաթիվը	30.08.2017
Արձանագրության N	6-17
Հաստատող մարմինը	Գիտական խորհուրդ
Մշակող	Նախապատրաստական բաժին
Ներդրման/իրականացման պատասխանատու	Նախապատրաստական բաժնի ղեկավար

Փաստաթղթի փոփոխությունները

Ամսաթիվ	Կատարված փոփոխություն	Անուն, ազգանուն, պաշտոն, Ստորագրություն

1. Նախապատրաստական բաժին ընդունվող օտարերկրացին, համաձայն ՀՀ Կառավարության 2011թ. ապրիլի 28-ի N 700- Ն որոշման **«ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններ օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կարգի»,** ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը.
   - դիմում՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի անունով (դիմումի ձևը տրամադրում է նախարարությունը).
   - Հարցաթերթ (ձևաթերթը տրամադրվում է նախարարությունը),
   - բժշկական տեղեկանք ընդհանուր առողջական վիճակի մասին (սույն տեղեկանքը կարող է տրված լինել նաև Հայաստանի Հանրապետության բժշկական կազմակերպությունների կողմից)
   - անձնագրի և ծննդյան վկայականի բոլոր էջերի պատճենները և (կամ) մկրտության վկայականը.
   - միջնակարգ կրթության վկայական (բնօրինակը՝ առկա համապատասխան կնիքները, նոտարական թարգմանությամբ և վավերությամբ)
   - 3 x 4 չափի 6 լուսանկար.
   - ինքնակենսագրություն (CV)՝ հայերենով, ռուսերենով կամ անգլերենով.
2. 1-ին կետով նախատեսված փաստաթղթերն ընդունվում են քննարկման՝ օտարերկրյա պետությունում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության կողմից հյուպատոսական վավերացման առկայության դեպքում:
3. ԵՄՀ ռեկտորի համապատասխան գրությամբ, փաստաթղթերի փաթեթը բուհի լիազոր ներկայացուցչը անձամբ ներկայացնում է ՀՀ ԿԳ նախարարություն: Եթե դիմորդը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում, ապա նա նույնպես կարող է վերոնշյալ փաստաթղթերը ներկայացնել ՀՀ ԿԳ նախարարություն :
4. Ուսանելու հրավիրված օտարերկրացիների ժամանման թույլտվություն ստանալու համար ԵՄՀ նախապատրաստական բաժինը դիմում է ՀՀ արտաքին գործերի նախարարության հյուպատոսական բաժին: Թույլտվություն ստանալուց հետո դիմորդը կարող է մուտքի վիզան ստանալ իր երկրի ՀՀ դեսպանատանը: Դեսպանատունն ուսանողին տրամադրում է ժամանման միանվագ վիզա:
5. ՀՀ ԿԳ նախարարության համախատասխան գրության առկայության դեպքում ԵՄՀ նախապատրաստական բաժինը ձեռնարկում է համապատասխան միջոցներ Հայաստանում օտարերկրյա ուսանողին անվճար կացության քարտ տրամադրելու համար: